ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՏԵՂԵԿԱՆՔ

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ՝ ԸՍՏ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ



ՎԱՆԱՁՈՐ 2022

HELSINKI CITIZENS ASSEMBLY

www.hcav.am

Հեղինակ՝ Էլիանորա Մխիթարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն տեղեկանքը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամների ֆինանսական աջակցությամբ: Սույն տեղեկանքում արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակինն են, եւ հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Նախաբան

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, մարդու իրավունքների պաշտպանությունն արդյունավետ կազմակերպելու և իրականացնելու նպատակով, տեղեկատվական հարցումներ է ուղարկում պետական կառույցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին: Ստացված տեղեկություններն օգտագործվում են Կազմակերպություն դիմած քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման կամ նրանց իրավունքների իրացմանն ուղղված իրավական խորհրդատվության նպատակով: Ի տարբերություն նախորդ տարվա, որը, կորոնավիրուսի (COVID-19) համավարակով պայմանավորված, առանձնացավ նախ՝ արտակարգ, ապա ռազմական դրությունների ռեժիմների սահմանմամբ, պետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին քաղաքացիների հասանելիության ժամանակավոր սահմանափակումներով, որոնք պայմանավորված էին մարդկանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ սահմանափակումներով, ինչպես նաև նշված մարմինների տարածք մուտք գործելու և տարածքից դուրս գալու հատուկ ռեժիմների սահմանմամբ, 2021 թ. հունվարից այդ սահմանափակումները մեղմացվեցին կամ հանվեցին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շարունակեց իր գործունեությունը՝ պահպանելով COVID-19-ի համավարակի կանխարգելման պայմանները:

Այդ ժամանակահատվածում պետական կառույցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրված տեղեկատվական հարցումների զգալի մասն ուղարկվել է ոչ թե թղթային, այլ էլեկտրոնային տարբերակով, որի արդյունքում պետական կառույցների հետ տեղեկատվական կապը դարձել էր ավելի դյուրին: Այն կառույցները, որոնց պաշտոնական էլեկտրոնային հասցեների հետ կապված առաջացել էին խնդիրներ, հարցումներն ուղարկվել են փոստային առաքմամբ: Պետք է արձանագրել, որ հիմնականում մարզպետարանների կայքէջերում տեղադրված պաշտոնական էլեկտրոնային հասցեները չէին գործում: ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության՝ իր ստորաբաժանումներով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության էլեկտրոնային հասցեների հետ կապված որևէ խնդիր չի առաջացել:

Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումն էականորեն կրճատեց տեղեկատվական հարցումների ուղարկման և դրանց պատասխանների ստացման ժամանակահատվածները, և փոստային ծառայության համար նախատեսված 7 օրերը նույնպես կրճատվեցին: Արձանագրենք, որ պետական կառույցները, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումներին մեծամասամբ պատասխանել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների պահպանմամբ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հերթական ուսումնասիրությամբ ներկայացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթների պահպանման վիճակը 2021 թ.-ին՝ համաձայն Կազմակերպության ստացած պատասխանների:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը

Պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղեկատվության տրամադրման ժամկետների պահպանման վերլուծության նպատակով Կազմակերպությունը մշակել և կիրառում է հետևյալ մեթոդաբանությունը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տեղեկատվական հարցումները հիմնականում ուղարկվել են էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի, այն է՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Այդ մարմիններից ստացված պատասխանները միաժամանակ հնարավորություն են տալիս գնահատելու նրանց կողմից տեղեկության տրամադրման՝ օրենքով սահմանված նորմերի կատարումը՝ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջների տեսանկյունից:

Ստացված տեղեկությունները դասակարգվել են հետևյալ խմբերի:

Ժամանակին ստացված համարվում են հարցումների այն պատասխանները, որոնք Կազմակերպությունն ստացել է՝ էլեկտրոնային տարբերակի դեպքում՝ 5-օրյա ժամկետում, փոստային ծառայության միջոցով- 12 օրյա ժամկետում:

Ուշացած են համարվում օրենքով սահմանված, ինչպես նաև Կազմակերպության կողմից ողջամիտ համարվող ժամկետների խախտմամբ ստացված պատասխանները:

Չպատասխանված են համարվում այն հարցումները, որոնց ընդհանրապես պատասխան չի տրվել՝ սույն տեղեկանքը հրապարակելու օրվա դրությամբ:

Տեղեկատվության բազան ստեղծվում է հետևյալ կերպ. հարցումների պատասխանները ստացվելուն պես մուտքագրվում են ՀՔԱՎ գրասենյակի հարցումների

էլեկտրոնային բազա, որտեղ նշվում են հարցումների պատասխանների հասցեատերը, ուղարկողը, ուղարկման ամսաթիվը, հարցումների պատասխանների էլեկտրոնային տարբերակը: Աղյուսակը հասանելի է միայն ՀՔԱՎ գրասենյակի աշխատակազմին, Կազմակերպությունը պահպանում է տեղեկատվական անվտանգության կանոնների և անձնական տվյալների գաղտնիության պահպանման նորմերը:

Տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա տարեկան կտրվածքով կազմվում է կատարված հարցումների վիճակագրություն: 2021 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ուղարկել է 998 գրություն, որոնցից 390-ը (39,08%) տեղեկատվական հարցումներ են, և որոնք հասցեագրվել են պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին. (2020 թ. ուղարկված գրությունների թիվը կազմել է 1103, որոնցից 334-ը (25,7%)՝ տեղեկատվական հարցում): **Ինչպես երևում է պատկեր 1-ից, 2021 թ.-ին Կազմակերպության տեղեկատվական հարցումների 10% և ավելի բաժին ունեցող բնագավառներն են ՀՀ պաշտպանության նախարարությունը (18,33%), տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները (18,06%), սոցիալական և առողջապահական բնագավառի մարմինները (15,36%), ՀՀ գլխավոր դատախազությունը և նրա ստորաբաժանումները (13,75%)**: Ըստ այդմ՝ նշված ոլորտներին ուղղված տեղեկատվության հարցումները կազմում են ընդհանուր հարցումների 62.31%-ը: Համեմատության համար նշենք, որ 2020 թ.-ին Կազմակերպության տեղեկատվական հարցումների 10% և ավելի բաժին ունեցող բնագավառներն են եղել ՀՀ պաշտպանության նախարարությունը (20.06%), տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները (12.57%), սոցիալական և առողջապահական բնագավառի մարմինները (10.78%):

2020 թ.			2021 թ.		
	թիվ	%		թիվ	%
ՀՀ պաշտպանության նախարարություն	67	20. 06%	ՀՀ պաշտպանության նախարարություն	68	18.33%
Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ	42	12. 57%	Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ	67	18.06%
Սոցիալական և առողջապահական բնագավառ	36	10. 78%	Սոցիալական և առողջապահական բնագավառ	57	15.36%
			ՀՀ գլխավոր դատախազություն և ստորաբաժանումներ	51	13.75%


2020թ.
21%
15%
11%
10%
8%
6%
6%
1%
19%
Պաշտպանության նախարարություն(21%)
Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների (15%)
Սոցիալական և առողջապահական բնագավառ(11%)
Դատախազություն և ստորաբաժանումներ(10%)
Ոստիկանություն և ստորաբաժանումների (8%)
Արդարադատության բնագավառի(6%)
Կրթության ն գիտության նախարարություն(6%)
ՀՀ արտաքին գործերի նախարարություն(2%)
Քննչական կոմիտե(1%)
ՀՀ տարածքային կառավարման նախարարություն(1%)
Այլ կառույցներ(19%)


2021թ.
18%
18%
15%
14%
5%
5%
2%
20%
Պաշտպանության նախարարություն(18%)
Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ(18%)
Սոցիալական և առողջապահական բնագավառ(15%)
Դատախազություն և ստորաբաժանումներ(14%)
Հատուկ քննչական ծառայություն(5%)
Արդարադատության բնագավառ(5%)
Արտաքին գործերի նախարարություն(3%)
Կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախ. (2%)
Այլ կառույցներ(20%)

Արդարադատության ոլորտ

2021 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 390 տեղեկատվական հարցումներից 19-ը (4,87%) ուղղված է եղել արդարադատության ոլորտին. (2020 թ. այն կազմել է 5.45%): 2021 թ.-ին արդարադատության ոլորտից ժամանակին են ստացվել 12, ուշացված 5, և 2 հարցման պատասխան չի ստացվել: 2020 թ.-ին արդարադատության ոլորտից «ժամանակին ստացված» հարցումների պատասխանները 17-ն են՝ կազմելով այդ ոլորտին ուղարկված գրությունների 85%-ը: Ուշացած են պատասխանել 3 հարցման,իսկ չպատասխանված հարցումներ չեն եղել:

2020 թ.		2021 թ.	
Ժամանակին	17	Ժամանակին	12
Ուշացած	3	Ուշացած	5
Չպատասխանված	0	Չպատասխանված	2

ՀՀ ոստիկանություն և նրա ստորաբաժանումները

2021 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 390 տեղեկատվական հարցումներից 19-ը (4,87%) ուղղված են եղել ՀՀ ոստիկանությանը և նրա ստորաբաժանումներին (2020 թ. դրանք կազմել են 7,19%, 334 հարցումներից 24-ը): 2021թ. ՀՀ ոստիկանության և նրա ստորաբաժանումների կողմից «ժամանակին» ստացված հարցումների պատասխանները կազմել են 77,78 % (2020 թ. «ժամանակին» են ստացվել ուղարկված հարցումների 73,91%-ը): ՀՀ ոստիկանությունը ժամանակին է պատասխանել ուղարկված 15 հարցումներին, 3 հարցման պատասխանել է ուշացած, իսկ 1 հարցման պատասխան չենք ստացել:

2020 թ.		2021 թ.	
Ժամանակին	17	Ժամանակին	15
Ուշացած	5	Ուշացած	3
Չպատասխանված	1	Չպատասխանված	1

Չպատասխանված գրությունը վերաբերել է՝

- Քաղաքացիական գործով հարցմանը

Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021 թ. ուղարկված 390 տեղեկատվական հարցումներից 67-ն (17,18%) ուղղված են եղել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին (2020 թ. -ին վերոհիշյալ կառույցներին ուղարկվել են 334 տեղեկատվական հարցումներից 27-ը (11,29%): 2021 թ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակին ստացվել են 67 հարցումներից 46-ի պատասխանները (68,66%): Ուշացած պատասխանել են 9 գրության, և անպատասխան է մնացել 12 գրություն:

2020 թ.		2021 թ.	
Ժամանակին	27	Ժամանակին	46
Ուշացած	20	Ուշացած	9
Չպատասխանված	1	Չպատասխանված	12

Չպատասխանված գրությունները վերաբերել են՝

- Ընտրությունների ժամանակահատվածում արձակուրդի մեջ գտնվող կամ արձակուրդ տրամադրելու մասին դիմում ներկայացրած աշխատակիցների թվի վերաբերյալ հարցմանը:

Սոցիալական և առողջապահական ոլորտի կառույցներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021թ. ուղարկված 390 տեղեկատվական հարցումներից 57-ն (63,33%) ուղղված են եղել սոցիալական և առողջապահական բնագավառի կառույցներին (2020 թ.-ին այն կազմել է 10,78%՝ 334 հարցումներից 36-ը): Ուղարկված հարցումներից 33-ին այս ոլորտը պատասխանել է ժամանակին, 24 հարցումներին ուշացած: Նկատենք, որ 2020 թ.-ի համեմատ սոցիալական և առողջապահական ոլորտին ուղղված հարցումների տեսակարար կշիռը 2021 թ.-ին աճել է:

2020 թ.		2021 թ.	
Ժամանակին	22	Ժամանակին	33
Ուշացած	14	Ուշացած	24
Չպատասխանված	0	Չպատասխանված	0

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021թ.-ին ուղարկված 390 տեղեկատվության հարցումներից 68-ն (17,44%) ուղղված են եղել ՀՀ պաշտպանության նախարարությանը (2020թ. այն կազմել է 20,06% 334 տեղեկատվության հարցումներից 67-ը): 2021թ.-ին ՀՀ պաշտպանության նախարարությունից «ժամանակին» են ստացվել են 10, ուշացած' 57, իսկ 1 հարցման պատասխան չենք ստացել: 2020թ.-ին 67 հարցումներից 35-ին պատասխանել են ուշացած:

2020թ.		2021թ.	
Ժամանակին	35	Ժամանակին	10
Ուշացած	31	Ուշացած	57
Չպատասխանված	1	Չպատասխանված	1

Չպատասխանված գրությունը վերաբերել է՝

- Զինծառայողի գործով հարցմանը

ՀՀ հատուկ քննչական ծառայություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021 թ.-ին ուղարկված 390 հարցումներից 19-ը (4,87%) ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն (2020 թ.-ին այն կազմել է 3,59%՝ 334 հարցումներից 12-ը): Ուղարկված հարցումներից ժամանակին ստացվել է 13, ուշացած՝ 4, իսկ 2 հարցման պատասխան չենք ստացել:

2020 թ.		2021 թ.	
Ժամանակին	11	Ժամանակին	13
Ուշացած	1	Ուշացած	4
Չպատասխանված	0	Չպատասխանված	2

ՀՀ գլխավոր դատախազություն և ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021 թ.-ին 390 տեղեկատվական հարցումներից 51- ը (13,08%), ուղարկվել է ՀՀ դատախազություն և ստորաբաժանումներ (2020 թ.-ին այն կազմել է 9,28%՝ 334 հարցումներից 31-ը): ժամանակին են ստացվել 41, ուշացված՝ 5, իսկ 5 հարցման պատասխան չենք ստացել: 2020 թ. ժամանակին են ստացվել բոլոր 31 հարցումների պատասխանները:

2020 թ.		2021 թ.	
Ժամանակին	31	Ժամանակին	41
Ուշացած	0	Ուշացած	5
Չպատասխանված	0	Չպատասխանված	5

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021թ. ուղարկված 390 տեղեկատվության հարցումներից 10-ն (2.56%) ուղղված են եղել ՀՀ արտաքին գործերի նախարարությանը (2020 թ.-ին այն կազմել է 2,40%՝ 334 տեղեկատվական հարցումներից 8-ը): 2021 թ. ուղարկված 10 հարցումներից 8-ին պատասխանել են ժամանակին, 1-ին ուշացած, 1-ը մնացել է անպատասխան:

2020 թ.		2021թ.	
Ժամանակին	4	Ժամանակին	8
Ուշացած	3	Ուշացած	1
Չպատասխանված	1	Չպատասխանված	1

Չպատասխանված գրությունը վերաբերել է՝

- Անհայտ կորած զինծառայողի գտնվելու հնարավոր վայրի վերաբերյալ հարցմանը:

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021 թ. ուղարկված 390 տեղեկատվության հարցումներից 6-ն (1,54%) ուղղված է եղել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը (2020 թ.-ին այն կազմել է 5,69%՝ 334 տեղեկատվական հարցումներից 8-ը): Հարցումներից 4-ին պատասխանել են ժամանակին, 2-ին՝ ուշացած:

2020 թ.		2021 թ.	
Ժամանակին	4	Ժամանակին	4
Ուշացած	3	Ուշացած	2
Չպատասխանված	1	Չպատասխանված	0

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2021 թվականին ուղարկված 390 տեղեկատվության հարցումներից 74-ն ուղարկվել է այլ կառույցների, մասնավորապես՝

- Ազգային անվտանգության ծառայություն ուղարկվել է 13 հարցում, որոնցից 9-ի պատասխանը ստացվել է ժամանակին, 2-ը՝ ուշացված,իսկ մյուս 2-ը չենք ստացել
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ուղարկվել է 8 հարցում, որոնցից 7-ի պատասխանը ստացվել է ժամանակին, իսկ 1 հարցման պատասխան չենք ստացել
- ՀՀ ԱԺ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին
- ՀՀ վարչապետին ուղարկվել է 4 հարցում, որից 2 պատասխանը ստացել ենք ժամանակին, իսկ մյուս 2-ը՝ ուշացած
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանն ուղարկվել է 2 հարցում, 2-ի պատասխանն էլ ստացվել է ժամանակին
- ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացված
- ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն ուղարկվել է 2 հարցում, որոնցից 2-ի պատասխանը ստացվել է ժամանակին, 2-ը՝ ուշացված
- ՀՀ կադաստրի կոմիտե ուղարկվել է 2 հարցում, 2-ի պատասխանն էլ ստացվել է ժամանակին
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ուղարկվել է 3 հարցում, 3 հարցմանն էլ պատասխանվել է ժամանակին
- ՀՀ բարձրագույն դատական խորհուրդ ուղարկվել է 2 հարցում, 2 հարցմանն էլ պատասխանվել է ուշացված
- ՀՀ դատական դեպարտամենտ ուղարկվել է 2 հարցում, որոնցից 1-ի պատասխանը ստացվել է ուշացած, 1-ինը՝ ժամանակին
- ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ուղարկվել է 4 հարցում, որոնց պատասխանվել է ժամանակին
- ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացել ենք ուշացված
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն ուղարկվել 17 հարցում, որից 10-ին պատասխանել են ժամանակին, 7-ին՝ ուշացված
- ՀՀ առողջապահության նախարարության դատաբժշկական գիտագործնական կենտրոն ուղարկվել է 3 հարցում, 3 հարցմանն էլ պատասխանել են ժամանակին
- Արցախի Հանրապետության նախագահին ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չենք ստացել
- Արցախի Հանրապետության գլխավոր դատախազություն ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանը ստացել ենք ժամանակին
- ԱՀ արտաքին գործերի նախարարություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացել ենք ժամանակին
- ԱՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացել ենք ուշացված
- Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական և միգրացիայի հարցերի նախարարություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չենք ստացել

- Հայաստանում Արցախի կառավարության օպերատիվ շտաբ ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացել ենք ուշացած
- Արցախի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը չենք ստացել։

Ամփոփելով 2021 թ. պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկատվական հարցումներին տրված պատասխաններն՝ ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների՝ արձանագրում ենք, որ սահմանված ժամկետները պահպանել են հետևյալ պետական մարմինները.

- ՀՀ ազգային անվտանգության ծառայություն
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
- ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության Լոռու մարզային բաժին
- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն
- ՀՀ դատական դեպարտամենտ
- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը
- ՀՀ էկոնոմիկայի նախարայաություն
- ՀՀ ոստիկանությունն իր ստորաբաժանումներով
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ ԱՆ քրեակատայաղական վարչություն
- ՀՀ գլխավոր դատախազություն
- ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները

2021 թ.-ին առավել մեծ թվով ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են՝

- ՀՀ ոստիկանություն և ստորաբաժանումներ
- ՀՀ քննչական կոմիտե
- ՀՀ գլխավոր դատախազություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ դատախազություն ու ստորաբաժանումներ
- ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայություն
- ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը
- ՀՀ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները

Համեմատության կարգով նշենք նաև 2020 թ.-ին ժամանակին պատասխան տրամադրած կառույցների ցանկը՝

- ՀՀ ոստիկանություն և ստորաբաժանումներ
- ՀՀ քննչական կոմիտե
- ՀՀ արդարադատության ակադեմիա

- ՀՀ գլխավոր դատախազություն
- ՀՀ պաշտպանության նախարարություն
- ՀՀ արդարադատության նախարարություն
- ՀՀ դատախազություն ու ստորաբաժանումներ

2021թ.-ին առավել մեծ թվով ուշացած և պատասխան չտրամադրած կառույցներն են՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
- ՀՀ բարձրագույն դատական խորհուրդը
- ՀՀ պաշտպանության նախարարություն

Համեմատության կարգով նշենք 2020 թ.-ին ուշացած և պատասխան չտրամադրած կառույցների ցանկը՝

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը
- տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններ
- ՀՀ կրթության,գիտության,մշակույթի և սպորտի նախարարությունը
- ՀՀ արտաքին գործերի նախարարությունը

Ինչպես տեսնում ենք՝ ՀՀ գլխավոր դատախազությունը, ՀՀ քննչական կոմիտեն, ՀՀ ոստիկանությունն իր ստորաբաժանումներով, ՀՀ արդարադատության նախարարությունը թե՛ 2020 թ.-ին, թե 2021թ.-ին տեղեկատվական հարցումներին ամենաշատ թվով ժամանակին պատասխաններ տրամադրած կառույցներն են: Համեմատության համար նշենք, որ 2021թ.-ին աճել է չստացված և ուշացած գրությունների տեսակարար կշիռը։

Ամփոփելով՝ 2021թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 390 տեղեկատվական հարցումներից «ժամանակին» է ստացվել 240 հարցման պատասխան (61,54%), ուշացած՝ 119 (30,26%), իսկ 31 հարցման պատասխան չի ստացվել (8,21%): Համեմատության համար նշենք, որ 2020 թ. պետական կառույցներին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկված 334 տեղեկատվական հարցումներից «ժամանակին» է ստացվել 227 հարցման պատասխան (67,96%), ուշացած՝ 98 (29,34%), իսկ 9 հարցման պատասխան չի ստացվել (2,69%):